ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 31-Ա

ԷԼԵԿՏՐԱԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ V ԽՈՒՄԲ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳԼԽԱԴԱՍԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի ապրիլի 21-ի N 583-Ն որոշման հավելվածի 611-րդ կետը՝

1. Ստեղծել էլեկտրաանվտանգության V խումբ շնորհելու գլխադասային հանձնաժողով (այսուհետ՝ գլխադասային հանձնաժողով):

2. Հաստատել գլխադասային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

3. Գլխադասային հանձնաժողովի նախագահին՝ մեկամսյա ժամկետում հաստատել գլխադասային հանձնաժողովի անհատական կազմը և աշխատակարգը:

4. Գլխադասային հանձնաժողովի աշխատանքների կազմակերպման ապահովումը վերապահել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

12.01.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ